ՊՐՈՖ. Ա. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ԴԱՎԻԹ ԲԱՂԻՇԵՑՈՒ ՏԱՐԵԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՐԱ ԱՐԺԵՔԸ ՀԱՅ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

§ 1. Հայ ժողովրդի պատմության տ՛չ մի ժամանակաշրջան այնքան անմշակ չէ, որքան 15-18-րդ դարերի միջև ընկած շրջանը։

Լենկ-Թեմուրի արշավանքից հետո, կարծես ,կտրվում է մեր պատմության թելը և հայ ժողովրդի հետագա շրջանի պատմությունը դադարում նախորդ շրջանի պատմության օրգանական շարունակությունը լինելուց։ Դա այնքան տվրորական է դարձել, որ այդ մասը հայոց պատմության որոշ դասընթացներում ուղղակի դուրս է նետվում և հայ ժողովրդի հին ու միջին դարերի պատմությունը հասցրվում է մինչև 15-րդ դարը և այստեղ էլ վերջակետ դրվում։

Ինչ որ արհամարական վերաբերմունք գոյություն ունի նաև այս շրջանի աղբյուրների նկատմամբ։ Այն ժամանակ, երբ հին շրջանի և վաղ միջնադարի բոլոր հայ պատմագրերը հրատարակվել են, կամ անգամ այնպիսի մատենագրեր, որոնք հրատարկված են 40-50 անգամ (Եղիշե, Նարեկացի և ուրիշներ), 15-18-րդ դարերի պատմական սկզբնաղբյուրների մեծ մասը դեռ սպասում են հրատարակության հերթում։ Ճիշտ է, այս շրջանի պատմագրները մանր են և նրանց նկարագրած ժամանակը պատմական շատ կարճ ժամանակաշրջան է ընդգրկում, բայց այնուամենայնիվ, նրանք կան և արժեքավոր են իրենց նկարագրած ժամանակաշրջանի համար։ Այդ շարքի մանր պատմագրներից կարելի է հիշել Խաչատուր Կաֆայեցուն, Կիրակոս Բանասերին, Երեմիա Քոյոմրճյանին, Ստեփանոս Դաշտեցուն և ուրիշներին։ Արժեքավոր են նաև ուշ միջնադարից մեզ հասած հազարավոր հիշատակարաններն ու հիշատակագրությունները, որոնց մեծ մասը նույնպես չեն հրատարակված։

Ուշ միջնադարի աչքաթող արված այս մատենագրների շարքին է պատկանում մեր ուսումնասիրության նյութ հանդիսացող բանասեր Դավիթ Բաղիշեցու ծաղկաքաղ տարեգրությունը։

§ 2. Նախ մի քանի խոսք Բաղեշի և նրա գրչության դպրոցի մասին։

Բաղեշն առաջին անգամ մեր մատենագրության մեջ հիշվում է Սեբեոսի մոտ*)։ Բաղեշն, ինչպես պարզվում է, պատմական Խերհեթն է։ Այդ երևում է Վարդան Բալվերցու որոշակի մի տեղեկությունից՝ գրի առնված 1680 թվին։ Նա իր թողած հիշատակարանում հայտնում է, որ իր ձեռագիրը «Գրեալ եղև ի Բաղէշ... որ ըստ Քերթողին Մովսէսի՝ Խերհեթ անուանի**)» Այնպես որ Հյուբշմանի կասկածներն այն մասին՝ թե Բաղեշը Աղձնիքի՞ մասն է կազմել, թե Բզնունյաց, այժմ արդեն փարատված պիտի համարել***)։ Շիրակացու «Աշխարհացույց»-ում Բաղեշը հիշված է Խերհեթ ձևով, իսկ սա Աղձնիքի գավառներից մեկն է հանդիսացել****)։

Հետագա մատենագրներից Բաղեշն ավելի որոշակի ձևով հիշում է Թովմա Արծրունին։ Նա խոսելով Աշոտի (Վասպուրականի իշխանի) տարած հաղթանակի մասին արաբական զորքի վրա, նշում է, որ հայոց զորքերը թշնամուն հետապնդեցին մինչև «շահաստան Բաղէշ»*****)։ Բաղեշի «շահաստան» ձևով հիշվելն ինքնին ցույց է տալիս, որ նա 10-րդ դարում Հայաստանի վաճառաշահ քաղաքներից մեկն է հանդիսացել։

Հետագա մատենագրներից Բաղեշն հիշված

*) Սեբեոսի եպիսկոպոսի Պատմություն, աշխատ. Ս. Մալխասյանի, Երևան, 1939 թ., էջ 142։

**) ՀՍՍՌ Մատենադարան, № 6434, թ. 223ա։

***) Հ. Հիւբշման, Հին հայոց տեղւոյ անուններ, Վիեննա 1907 թ., էջ 188։

****) Տես Ա. Աբրահամյանի «Շիրակացու մատենագրությունը», Երևան 1944 թ., էջ 349։

*****) Թովմա վարդապետի Արծրունւոյ Պատմութիւն տանն Արծրունեաց, ՍՊԲ 1887 թ., էջ 110։

է Վարդանի «Աշխարհացույց»-ում։ Բաղեշն, ինչպես երևում է, 13-րդ դարում Արծկի, Խլաթի և Հիզանի հետ միասին, Բզնունյաց շրջանի մասն է կազմել*)։

Բաղեշը մեծանում և առևտրական խոշոր կենտրոն է դառնում հատկապես 17-րդ դարում։ Գտնվելով տարանցիկ ճանապարհների խաչաձևման կենտրոնում և ակտիվ մասնակցելով փոխանակմանը, նա դառնում է հարավային Հայաստանի խոշորագույն քաղաքներից մեկը։ 17-րդ դարում Բաղեշով էր անցնում Ուռհայից Դիարբեքիրի վրայով դեպի Խոյ և Թավրիզ տանող ճանապարհը։ Բաղեշով էր անցնում Խարբերդից Արևելյան Արածանիի վրայով Մուշ և Արևելք գնացող ճանապարհը։ Եվ վերջապես, Բաղեշից էր անցնում Սզերդի վրայով եկող և Վանա լճի հյուսիսով՝ Խլաթի, Արծկի և Բերկրիի վրայով հյուսիս գնացող ճանապարհը։ Նա 17-րդ դարում այնքա՛ն էր մեծացել, որ որոշ ուսումնասիրողների կարծիքով, ունեցել է մինչև 25.000 տուն բնակչություն՝ մեծ մասը հայ առևտրականներ և արհեստավորներ։ Էփրիկյանը Բաղեշի մասին «Բազմավէպ»-ում տեղավորած իր հոդվածում, հիմնվելով հնագույն հիշատակությունների վրա, գրում է, որ Բաղեշը «Ի հնուց հայոց ճոխ և բազմամարդ քաղաքներէն մին եղած է»**)։ Բաղեշն առանձնապես հայտնի է եղել իր ներկած կտավով— «շիլայուն», որը արտահանության գլխավոր ապրանքներից մեկն է հանդիսացել։ Նա հայտնի է եղել նաև իր՝ խեժով, մոմով, մեղրով և այլ ապրանքներով։

Ահա այս շրջանում է, որ Բաղեշում սկսել են ծաղկել հայ գրչության աչքի ընկնող օջախները։

§ 3. Բաղեշի գրչության դպրոցը հայ կուլտուրայի և մատենագրության կարևորագույն օջախներից մեկն է հանդիսացել։ Նա մեծ գործ է կատարել հայկական ձեռագրերը հավաքելու և ընդօրինակելու գործում։ Կասկած լինել չի կարող, որ եթե չլիներ Բաղեշի հայ գրչության դպրոցը, ապա հին հայկական մեր մի շարք մատենագրներ և ունիկում ձեռագրեր անհետ կորած կլինեին մեզ համար։ Բացի այդ, Բաղեշը ստեղծել է հայ մանրանկարչության՝ օրիգինալ մի շկոլա և մեծ դեր խաղացել, ընդհանրապես, հայ մանրանկարչության զարգացման գործում։

*) M. J. Saint Martin. Memoires historiques geographiques, sur l'Armenie T. II, Paris 1819, p. 428:

**) Էփրիկյան, Բաղէշ (տես «Բազմավէպ», 1901 թ., № 1, էջ 13—20)։

Իրավացի է բանասեր Սառաֆյանը, երբ իր «Կուսակցության պատմությունը» անգլերեն աշխատության մեջ նշում է, որ «Այս (այսինքն Բաղեշի Ա. Ա.) դպրոցը աչքի էր ընկնում XVII դարում, որպես խոշորագույն կենտրոն ուսումնասիրության... նա ուներ ձեռագրերի լավագույն ժողովածու*)։

Բաղեշի գրչությունը կենտրոնացած է եղել, գլխավորապես, չորս վանքերում— 1) Գոմանց կամ Տատրաքնակ Աստվածածնում։ ուր գտնվել է Բաղեշի հոգևոր առաջնորդարանը, 2) Խնդրակատար կոչվող Աստվածածնի վանքում (ուր աչքի ընկնող ուսուցիչներից էին Ներսես Բաղիշեցին, մյուս Ներսեսը, Կարապետը, Հերապետը, Պետրոս վարժապետը և ուրիշները), 3) Ավեխու կոչվող Աստվածածնում և 4) Ամիրդոլու վանքում։ (Վերջինս իր ծաղկման շրջանն ապրեց 16-րդ դարի վերջից մինչև 18-րդ դարը։ Նրա աչքի ընկնող գործիչներն են հանդիսացել Հովհաննես և Խաչատուր գիտուն վարդապետները, հանրածանոթ տաղասաց Վարդան Բաղիշեցին և ուրիշները)։

Մեր հետևանքի, Դավիթ Բաղիշեցու գործունեությունը կապված է եղել Խնդրակատար Աստվածածնի գրչության դպրոցի հետ։

§ 4. Դավիթ Բաղիշեցու անձնավորության մասին բավականաչափ տեղեկություններ հասել են մեզ։ Նա, ինչպես երևում է իր կոչումից, Բաղեշից է։ Ծնված պիտի լինի մեր հաշվով, 1610-1620-ական թվերին։ Հոր անունն է Ալեքսան, իսկ մորը՝ Խանաղի։ Ունեցել է մի եղբայր (մահտեսի Մելիքսեթը) և մեկ քույր (Խաթունաղը)։ Որոշ հիշատակարաններում Բաղիշեցու այս հարազատների շարքում հիշվում է նաև նրա եղբոր որդին՝ Սահակը (երբեմն հիշվում է Իսահակ ձևով) և նրա «Գրոց աշակերտը»— Ավետիս քահանան, որը հայտնի է բանասեր մականունով։ Բաղիշեցու այս բարեկամական շրջանի մասին ուշագրավ տեղեկություն մեզ տալիս է Գրիգոր Խոցը՝ Դավթի պատվերով ընդօրինակած ձեռագրի հիշատակարանում. «Արդ գրեցաւ սա ի քաղաքս Բաղէշ,—գրում է նա,—ընդ Հովանեաւ... սրբոց, որք աստ կան հաւաքեալ՝ ի խնդրոյ սրբազան և քաջայաղթ փիլիսոփայի Դաւթի վարդապետին ի վայելումն անձին և յիշատակ բարի հոգւոյ իւրոյ և ծնողացն— հօրն՝ Ալեքսանին և մօրն՝ Խանաղին և հոգևոր որդւոյ իւրոյ՝ տէր Աւետիս սրբասնունդ քահանային և հարազատ եղբարն Մելիքսեթին և քուերն Խաթունաղին և նորաբողբոջ մանկանն Սահակ եղբօրորդւոյ

*) K. Sarafian, History of Education in Armenia, la Verne, 1930, p. 142:

իւրոյ և ամենայն արհամարհու մերձաւորացն, կենդանեացն և հանգուցելոցն*)»։ Իր ծնողների և աշակերտի մասին փոքրիկ հիշատակություն ունի նաև ինքը Բաղիշեցին, Գրիգոր Տաթևացու Վանականի՝ Հոբի մեկնության լուծման իր ընդօրինակած ձեռագրի հիշատակարանի մեջ «Զտրուպ Բաղիշեցի Դաւիթ քանասէրս հիշեցէք ի Քրիստոս Աստուած մեր, որ ստացայ զՅոբայ մեկնիչս և եսու գրել զլուծմունքս և եդի ի միում տփի՝ յիշատակ ինձ, անարժանիս, և ծնողաց Ալեքսանոսին և Խանաղին՝ հանգուցելոցն և Քրիստոս, և հոգևոր որդոյն իմոյ տէր Աւետիս գրոց աշակերտի, Թուին ՌՃԺԳ (1664)**)»։

Վանի առաջելոց վանքի երբեմնի սեփականությունը կազմող մի ձեռագրի հիշատակարանից երևում է, որ Դավիթը բարեկամական սերտ կապ է ունեցել տաղասաց Վարդան Բաղիշեցու հետ։ Հիշատակարանում կարդում ենք. «Զգերազանցեալն հոգով, զպերճացեալն բանիւ իմաստութեան, զԲաղիշեցի Վարդան րաբունապետն յիշեսջիք առ յոյսն ամենեցուն Քրիստոս ճաճղերձ ճարտասանն իւրով Դաւիթ վարդապետիւ (ընդգծումը մերն է Ա. Ա.), զի Եղիազարու վանաց գրքերն Խ (40) հին փթեալ գիրք վերստին ետուն նորոգել և կազմել, և զեկեղեցու սագերն և զգումբէթն վերստին նորոգեաց... Թուին ՌՃԻԲ (1673)***)»։

Դավիթ Բաղիշեցին իր ժամանակի մեծ հեղինակություն ունեցող անձնավորություններից մեկն է հանդիսացել։ Այդ, ի միջի այլոց, երևում է 1661 թվին Բաղեշի Գոմանց Աստվածածնի կոչվող վանքում գրված մի ձեռագրի հիշատակարանից։ Գրիչը առաջնորդ Մեսրոպ վարդապետի հետ միասին, որպես հովանավորող անձնավորության, հիշում է նաև Դավիթ Բաղիշեցուն. «Գրեցաւ... ի կաթողիկոսութեանն սուրբ աթոռոյն էջմիածնայ տէր Յակոբին և ի հայրապետութեանն սուրբ ուխտին տէր Մեսրոպ րաբունապետին և աշակերտի, Դաւիթ վարդապետին իւրոյ, որ քացում ջանս և սէր ունէին հետ մեղաւորիս****)»։

Դավիթն իր կրթությունը, մանկական հասակից, ստացել է Բաղեշի առաջնորդ Մեսրոպ եպիսկոպոսի մոտ։ Այդ մասին նա հիշում է իր տարեգրության մեջ. «Մնեալ ի մանկութենէ առ ոտս երջանիկ և երիցս երանեալ հօրն մերոյ Մեսրոպ վարդապետի անյաղթ փիլիսոփայի և քաջ քարտուղարի*)»։ Այս Մեսրոպը Հակոբ Ջուղայեցու աշակերտներից էր և Փիլիպոս կաթողիկոսի կողմից Բաղեշի առաջնորդ էր նշանակվել 1638 թվականից։ Նույն Մեսրոպից նա 1641 թվին ստացել է «գաւազան իշխանութեանն», այսինքն վարդապետելու, քարոզելու իրավունք։ 1651 թվին Դավիթը նշանակվում է Բաղեշի Խնդրակատար Աստվածածնի կոչվող վանքի վանահայր։ Այս մասին նա իր տարեգրության մեջ գրում է. «Թուին ՌՂ (1641 թ.) ընկալայ ի նմանէ (այսինքն Մեսրոպ վարդապետից. Ա. Ա.) աստիճան քահանայութեան և յետ Զ (6) ամի գաւազան իշխանութեան, թէպէտ թափուր և տգէտ գոլով իմ յուսմանէ։ Թուին ՌՃ (1651 թ.) եդին զանարժան ծառայ Խնդրակատար սուրբ Աստվածածին**)»։

Մեր այս Դավթին չպետք է շփոթել նրա ժամանակակից և Բաղեշում ապրող ու գործող մի այլ Դավիթ քահանայի հետ, որը դարձյալ Մեսրոպ վարդապետի աշակերտն է եղել։ Վերջինս 1658 թվին Բաղեշում ընդօրինակած մի ձեռագրի հիշատակարանում իր բարեկամական շրջանի մասին գրում է. «Արդ՝ որք ճաշակէք ամենալի սեղանոյս... աստուած ողորմի ասէք ինձ անարժան (Դավիթ Ա. Ա.) գծողիս և ծնողացն իմոց՝ Սուքիասին և Հուրիփաշին և իմ եղբարց՝ Բլբուլին, Մովսէսին, Նզեկիէլին և նորահաս մանկան իմոյ Ստեփանոսին...***)»։

Բաղիշեցին մահացել է Լիմում 1673 թվին և թաղվել այնտեղ։

§ 5. Որքան հարուստ են Բաղիշեցու անձնավորության վերաբերող նյութերը, այնքան կցկտուր են նրա գրական-բանասիրական աշխատություններին վերաբերող տեղեկությունները։ Նրա գրական աշխատության մասին մենք ի վիճակի ենք դատել միայն մեզ հասած այն ձեռագրերից, որոնք ընդօրինակել է ինքը, կամ հանձնարարել է ընդօրինակելու ուրիշներին։

*) ՀՍՍՌ Մատենադարանի ձեռագիր, № 5179 թ. 242ա, բ։

**) ՀՍՍՌ Մատենադարանի ձեռագիր, № 5732 թ. 165ա։

***)) Տես «Դիւան հայոց պատմութեան» 10-րդ հատոր, Թիֆլիս 1912 թ. (հրատ. Գ. քհն. Աղանեանցի), էջ ԼԹ։

****) ՀՍՍՌ Մատենադարանի ձեռագիր, № 8079, էջ 354—355։

*) Դավիթ Բաղիշեցու ժողկաքաղ տարեգրություն, էջ 84 (այստեղ և մյուս բոլոր տեղերում մենք օգտվել ենք հրատարակության համար մեր պատրաստած տեքստից և մատնացույց արել նրա էջահամարները)։

**) Դավիթ Բաղիշեցու ժողկաքաղ տարեգրությունը էջ 84։

***) ՀՍՍՌ Մատենադարան, ձեռագիր № 7270, թ. 180ա։

Դավիթ Բաղիշեցու ձեռքով գրված և մեզ հասած ամենահին ձեռագիրը—այդ ՀՍՍՌ Մատենադարանի № 8692 ձեռագիրն է, որը ընդօրինակել է 1653 թվին։ Ձեռագրի մանրանկարչությունը կատարվել է հետագայում։ Այս մասին հիշատակարանում կարդում ենք. «Ցանկացող եղեալ [զսա] բարեմիտ քահանայն տէր-Վարդան և ստացաւ զսուրբ քառաչահեան աւետարանս, 'զոր էր դրեալ թարց նկարագրութեան ձեռամբ Դաւիթ վարդապետ Բաղիշեցւոյ...*)»։

ՀՍՍՌ Մատենադարանում գտնվում է 1651 թվի ընդօրինակած մի ձեռագիր—№ 1752 ձեռագիրը, որի գրիչն է ոմն Դավիթ, որի գիրը շատ նման է Բաղիշեցու գրին։ Նրա հիշատակարանում ասված է. «Ջաոաձեալս մեղօք յիշել ի սրբամուեր յաղօթս ձեր աղաչեմ վասն աստուծոյ զգծողս Դաւիթս ի տէրւ Գրեցաւ թուիս հայոց Ռ և Ճ (1651)**)»։ Հաստատապես ասել թե սա Բաղիշեցի Դավիթն է, դժվար է։ Ի միջի այլոց ՀՍՍՌ Մատենադարանում կան նման կարգի կասկածելի մի քանի այլ ձեռագրեր ևս, որոնց վրա մենք կանգ չենք առնում։

Ցոթ տարի հետո, 1660 թվին, Թումա գրիչը Բաղիշեցու պատվերով ընդօրինակել է Հովհան Ոսկեբերանի և Եփրեմ Ասորու՝ Պողոսի տասն և չորս թղթերի մեկնությունը և թողել հետևյալ հիշատակարանը. «Եռափափագ սրտիւ և յոժար կամօք ետ գրել զսա (վարդապետն Դաւիթ) յարդար վաստակուց իւրոց... ի մեծ թուականս հայոց ՌՃ և Թ (1660) ամին, ի Բաղէշ քաղաքի***)»։ Այս ձեռագիրը սկզբում գտնվել է Սևանում, գրանցվել է նրանց № 99-ի տակ****), իսկ հետո տեղափոխվել ՀՍՍՌ Մատենադարան։

Հաջորդ տարին, 1661 թվին, մի այլ գրիչ, Գրիգոր անունով, Բաղիշեցու համար ընդօրինակել է Եփրեմի՝ Երեմիայի մեկնությունը, զանգատվելով ժամանակի դառնության վրա. «Արդ՝ գրեցաւ սուրբ տառս, որ է մեկնութիւն Երեմիայի մարգարէին, ի թուին հայոց ՌՃ և Ժ (1661)՝ ձեռամբ... Գրիգոր երիցու, ի դառն և վշտաշատ ժամանակիս, որ նեղիմք ի ձեռս այլազգեաց և հարկապահանջութեան նոցա*****)»։ Այս ձեռագիրը

*) ՀՍՍՌ Մատենադարան, ձեռագիր № 8692, թ. 310բ։

**) ՀՍՍՌ Մատենադարան, ձեռագիր № 1752, թ. 98բ։

***) ՀՍՍՌ Մատենադարան, ձեռագիր № 4109, էջ 700։

****) Ն. Մառ, Ցուցակ համառօտ ձեռագրաց վանուց Սևանայ, Մոսկվա, 1892 թ., էջ 45։

*****) ՀՍՍՌ Մատենադարան № 5179, թ. 242ա։

գտնվում է ՀՍՍՌ Մատենադարանում։

1664 թվին Բաղիշեցու պատվերով ընդօրինակվել է Գրիգոր Տաթևացու՝ Հոբի մեկնությունը։ Ձեռագրի հիշատակարանը գրել է ինքը, Բաղիշեցին*)։ Այս ձեռագիրը ևս ՀՍՍՌ Մատենադարանի սեփականություն է հանդիսանում։

Դավիթ Բաղիշեցու անվան հետ կապվում է Լիմ անապատում երբեմնի գտնված մի հարանց Վարք, որն ունի Դավթի փոքրիկ հիշատակագրությունը՝ իրեն, Վարդան Բաղիշեցու (տաղասացի) և Մեսրոպ վարդապետի (իր աշակերտի) հետ Լիմ անապատ ուխտի գալու և մի շարք նվերներ վանքին տալու մասին։ Այս ձեռագիրը, դժբախտաբար, առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ տաճկական վայրագությունների շրջանում կորել է։

Եվ վերջապես, 1669 թվին Բաղիշեցին ընդօրինակել է տվել Իգնատիոսի կողմից Ղուկասի և Մատթեոսի ավետարանների մեկնությունը։ Այս մասին նա գրել է. «Վարդապետն Իգնատիոս մեկնեալ [էր] զաստուածընկալ սուրբ աւետարանս Ղուկասու... և ես հէգս և թշուառականս և թափուրս յամենայն գործոց բարեաց, տրուպ Դաւիթ բանասէր... ցանկացայ սմա... և յանկեալ աւարտեցաք ի թուաբանութեանս Յաբեթական տոմարի Ռ և Ճ և ԺԸ ամերորդի...**)»։ Այս ձեռագիրը Բաղիշեցու վերջին ձեռագիրն է հանդիսացել։ Այդ երևում է նույն ձեռագրում Մեսրոպ վարդապետի թողած մի հիշատակարանից, ուր կարդում ենք. «Ես Բաղէշու քաղաքի վերատեսուչ առաջնորդ տրուպ Մեսրոպ վարդապետս ի թուին ՌՃԻԲ (1673) եկի ի ծովաշուրջ անապատն Լմայ հանդերձ հոգեւոր որդւովք իմովք, Դաւիթ վարդապետաւն և Աւետիք բանասէրիւ, Դաւիթ վարդապետն վախճանեցաւ զկեանս իւր... և մարմինն եդեալ եղև ընդ Հավանեաւ սուրբ Գէորգայ զօրավարին...***)»։ Ուրեմն, Դավիթ Բաղիշեցին Մեսրոպ վարդապետի հետ միասին ուխտի է եկել Լիմ, այստեղ էլ մահացել ու թաղվել։

Որ իրոք, Դավիթ Բաղիշեցին մահացել է Լիմում, այդ երևում է նաև Լիմում Դավթի գերեզմանի վրա դրված տապանաքարից, ուր կարելի էր կարդալ. «Հանգեաւ սուրբ խաչս բարեխօս առ Աստուած. Բաղիշեցի Դաւիթ վարդապետին, և ամենայն աշխատողացն. յիշեցէք ի Քրիստոս. թուին ՌՃԻԲ

*) ՀՍՍՌ Մատենադարան № 5732, թ. 165ա։

**) ՀՍՍՌ Մատենադարան, ձեռագիր № 5155 թ. 503ա։

***) Նույն, թ. 185ա։

(1673)*)»։ Այս ձեռագիրը սկզբում գտնվել է Լիմ անապատում, իսկ հետո, առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ մի շարք ձեռագրերի հետ տեղափոխվել է Էջմիածին և այժմ ՀՍՍՌ Մատենադարանի սեփականությունն է։

Բացի վերև հիշված ձեռագրից և տարեգրությունից, անկասկած, Դավիթ Բաղիշեցին ունեցել է ինքնուրույն աշխատություններ, որոնք մեզ չեն հասել։ Այդ երևում է Բաղիշեցու ժամանակակիցների կողմից նրան տրված այն մականուններից, որոնց հաճախ հանդիպում ենք մենք. «քաջ փիլիսոփա», «անյաղթ իմաստուն», «մեկնող ամենայն խորածածուկ գրոց» և այլն։ Դավիթն ունեցել է բանասիրական-մեկնողական կարգի ուրիշ աշխատություններ, որոնք և հիմք են տվել ժամանակակիցներին նման էպիտետներ գործ ածել։

§6. Դավիթ Բաղիշեցու «Ծաղկաքաղ տարեգրությունը», որի մասին մենք ցանկանում ենք խոսել, մատենագրական ինչ որ նորություն չի հանդիսանում։ Նա հայտնի է հայագիտական նեղ շրջանակում։ Նրանից առաջին անգամ, երևան տաղի չափ մի փոքրիկ հատված, առանց կոմենտարիայի, բերել է Ղ. վ. Փիրղալեմյանն իր «Նոտարք Հայոց»-ում**)։ Այնուհետև Բաղիշեցու պատմությանն անդրադարձել է Հ. Թոփչյանը 1898 թ. իր կազմած Խաչիկ վ. Դադյանի ձեռագրաց ցուցակում՝ տարեգրության իրեն հայտնի ընդօրինակությունը նկարագրելիս***)։ Նա ևս Բաղիշեցու տարեգրությունից բերել է մի քանի փոքրիկ հատվածներ և առաջ քաշել այդ երկի հրատարակության անհրաժեշտությունը։ Նույն թվին «Արարատ» ամսագրում Կիլիկեցի ստորագրությամբ, (հավանական է նույն Թոփչյանը լինի) լույս է տեսել Դավիթ Բաղիշեցու մասին մի փոքրիկ հոդված և նորից շեշտվել նրա տարեգրության կարևորությունը*)։ Բաղիշեցու տարեգրության մասին մի քանի տող տեղեկություն է տվել Ղ. Ալիշանը իր «Հայապատում» աշխատության մեջ։ Սակայն նա, ըստ երևույթին, տարեգրությունն անձամբ չի տեսել, ուստի և սխալմամբ ենթադրում է, որ Բաղիշեցու տարեգրությունը սկսված պիտի լինի «արաբացւոց աշխարհակալութեան սկզբէն»**), այն ինչ նա սկսվում է ավելի հին շրջանից։ Եվ վերջապես, 1912 թվին Գ. քհն. Աղանյանցն իր «Դիւան հայոց»-ի 10-րդ հատորում, որը նվիրված է մանր մատենագրներին, կանգ է առել Բաղիշեցու տարեգրության վրա և Փիրղալեմյանից առնելով մի քանի հատված, որպես նմուշ, հրատարակել***)։ Հայագետներից վերջին անգամ, Բաղիշեցու տարեգրության վրա կանգ է առել մեծանուն գիտնական Հ. Աճառյանը՝ իր «Հայոց անձնանունների բառարան»-ի երկրորդ հատորում և նորից շեշտել նրա հրատարակության անհրաժեշտությունը****)։ Սակայն Թոփչյանի, Աղանյանցի և Աճառյանի հայտնած ցանկությունները մնացել են լոկ ցանկություն։

(Շարունակելի)

*) Դիւան հայոց պատմութեան, գիրք Ժ, էջ 56։

**) Փիրղալեմեան, Նոտարք Հայոց, Կ. Պոլիս 1888 թ., էջ 56, 122—23, 148, 210։

***) Հ. Թոփչեան, Ցուցակ ձեռագրաց Դադեան Խաչիկ վարդապետի, Վաղ-պատ 1898 թ., էջ 69—69։

*) Կիլիկեցի, Դավիթ Բաղիշեցի (տես «Արարատ» 1898 թ., էջ 120—124)։

**) Ղ. Ալիշան, «Հայապատում», Վենետիկ 1901 էջ 129։

***) Դիւան հայոց պատմութեան, 10-րդ հատոր, էջ 40—58։

****) Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, Բ հատոր, Երևան 1944 թ., էջ 57—58։